

Եսայիայ 9:6 (Isaiah 9:6)

«Անոր Անունը Պիտի Կոչուի»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 12.23.01

Դ.Վ.ին իսկական ուրախ ծնունդ մը չներկայացներ: Ծնունդը կը ցուցունէ հակապատկեր մը: Մէկ կողմէն կը տօնենք, ուտելիք ընտանիքի հաւաքոյթ, հիշատակներ հին ծնունդներէն եւ նաեւ կանդրադարձանք թէ ժամանակը արագ կանցնի: Կ'անապարենք թէ պէտք է ուրախ ըլլանք:

Կարդանք Եսայիայ 9:6 - տեսնելու թէ ո՞վ է Յիսուս եւ թէ որքան կազդէ մեր կեանքին վրայ: *«Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ: Անոր անունը պիտի կոչուի Սֆանչելի Խորհրդակից, Հօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան»:*

Charles Spurgeon օր մը կը քարտէս Անգլիոյ մէջ բարեկամի մը հետ եւ Spurgeon նշմարեց հովր չափող գործիքը ախոռի մը վրայ, եւ կարդաց գրութիւնը որ կ'ըսէր *«Աստուած Սէր է»:* Զարմացաւ ըսելով, *«Այս գործիքը միշտ կը հովէն, բայց Աստուծոյ Սէրը անշարժ է»:*

Բարեկամը պատասխանեց *«Charles կը սխալիս - ըսելով հակարակ որ հովր միշտ կը փոխէ իր ուղղութիւնը, սակայն Աստուծոյ Սէրը միշտ կը մնայ հաստատ»:*

Յիսուսի ծնունդը Աստուծոյ սիրոյ իրականացումն է: Եսայեայ կըսէ *«Մեզի մանուկ մը ծնաւ եւ մեզի Որդի մը տրուեցաւ»:* Երբ սկսինք հասկնալ Աստուծոյ սէրը ինչպէս որ ենք, այն ատեն կ'անդրադառնանք թէ մենք երբեք առանցին չենք որեւէ պարաֆայի մէջ ալ որ ըլլանք, Աստուած մեր հետ պիտի ըլլայ:

Առաջին - Եսայեայ կըսէ **Յիսուս Սֆանչելի Խորհրդակիցն է:**

Յիսուս Աստուած է որ կը հասկնայ մեր առանցնութիւնը - որ կը հասնի մեր յուսալութեան, որ կը հասկնայ մեր կորուստը, մեր խորունկ պէտքերը: Եւ Ան կատարեալ խորհրդակից է, կարող եւ պատրաստ է մեզ լրսելու եւ իրատելու: Ան կարող է Աստուծոյ բոլոր իմաստութիւնը գործածելու մեր կեանքներէն ներս: Մեծառանձնաշնորհ մը ունինք՝ Քրիստոսի մօտենալու որպէս մեր սփանչելի խորհրդակիցը:

Եկրորդ - Յիսուս Հգօր Աստուած է:

Ան կը նմանի հգօր ոազմիկի մը - մեր հերոսը որ նակատամարտը յաղթած է մեր կեանքներուն բոլոր պարաֆաներուն եւ ահերուն դէմ:

Դաւիթ - Սաղմոս 25ը կըսէ - «Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցի: Ով իմ Աստուածս, քեզի յուսացի. թող չամչնամ ու թշնամիներս իմ վրաս չցրնծան: Բոլոր քեզի սպասողները թող չամչնան. ունայնութեամբ անօրէնութիւն ընողները թող ամչնան:»

Այս խօսքերը վստահելի խօստում մըն են որով Յիսուս Հգօր Աստուած է եւ միայն Ինքը կարող է եւ պատրաստ է մեզ բրկելու:

Երրորդ - Յիսուս Յաւիտեանական Հայր է:

Յիսուս մարմնացումն է յաւիտեանականութեան: Բայց այս չի նշանակէր որ Ան անհասկնալի է: Ան ունի հօր մը փափկութիւնը, հաւատարմութիւնը, համեստ ազնուութիւնը: Իր սէրը մեր կեանքներուն համար անվերջ է, որ յաւիտեանական ու անսահման է:

Չորրորդ - Յիսուս Խաղաղութեան Իշխան է:

Պողոս Առաքեալը Փիլիպեցիս 4ի մէջ կ'ըսէ թէ երբ մեր խաղաղութիւնը կորսնցնենք պէտք է Յիսուսի վստահինք, Ան մեզի կը լեցնէ Աստուծոյ խաղաղութեամբ, որ մեր երեւակայութենէն վեր է: Յիսուսի տուած խաղաղութիւնը չի նշանակէր թէ ներկայութիւն պիտի չ'ըլլայ, հապա վստահ գիտէնք թէ Ան միշտ մէզի հետ է: Ան մեզի կը լեցնէ Աստուծոյ խաղաղութեամբ, որ մեր երեւակայութենէն հեռու կ'երթայ: Յիսուս իրական խաղաղութիւն կը բերէ մեր սրտերուն - իրաւ հանգստութիւն:

Շատեր կը տօնեն Ծնունդը - գարդարելով - նուէրներով - խննոյֆով - երգերով - բայց չեն յիշեր Աստուծոյ Սէրը: Այսօր այս խօսքը մէզի համար է - «Աստուած դրկէց Իր Միածին Որդին: Աստուած մէզ կը սիրէ:»

Տէրը մեր սիրտը գիտէ: Նաեւ, Յիսուս կը փափափի որ մեր Սֆանչելի Խորհրդակիցը ըլլայ - մեր ապաւէնը ըլլայ - Իր սէրը տայ - նաեւ, Իր խաղաղութիւնը տայ: Որքան սֆանչելի իրականութիւն է Յիսուսի ծնունդը Իր փափաֆն է որ լիովին Իրեն վստահինք: